

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆ
Պոլիտիկոսի համար
Տարեկան 12 ծր.
Վեցամսյա 6 »
Արտասովորական համար
Տարեկան 15 »
Վեցամսյա 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ծր.
Վեցամսյա 1.50 »
ՎԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵՐԻ
Մանուցեան ճորտատաշիկ
հրեսիկ համար 40 սանթի
հ. իսկ վերջին երեսի համար
20 սանթիս հ. երեսիկ
անէջի անգլիներու համար
20 ՍՊ զեղը կըլլայ :

Վառնայի համար ձեռք 10 ս .

ՇՆԱԲԱԹ

Նամակ
W. 4
Vienne
R. P. Kalémecarian, Mechtzaristengasse
(Antriebe)

Պոլիտիկոսի համար
անս հասցիկի
МАКЦІЯ НА ВЪСТНИКЪ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
Գրքարկեսի և շին տրուի
Արտասովորական ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)
Պոլիտիկոսի համար ձեռքի
15 ՍԱՆԹԻՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ Ը ՀՐԱՏԱՐԱՍԿՈՒԻ ԶՈՐԵՔՇՈՒԹԻ ԵՒ ՇՆԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ՇՆԱԲԱԹԻ ԵՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏՔ ԵՒ ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵ

ՍԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ
Անշուշտ մեր չը վճարող բաժանորդները, եթե փոքր ինչ պարտաճանաչութեան զգացմունք ունին, կարգացիւ մեր նախորդ ազգերը որոնցմով կը յայտարարուէր թէ չը վճարող բաժանորդներու անունները պիտի յայտարարուի Շարժումի մէջ : Գանուեցան բաժանորդներ որոնք շտապեցին իրենց պարտքը վճարել. իսկ մէկ կարեւոր մասն ալ դեռ արձագանք չը տուաւ. Հիմա այդպիսիներուն կը յայտարարենք որ իրենց ժամանակ կը տրուի մինչեւ դեկտ. 15ը : Մինչեւ այդ օրը պիտի սպասենք. ու այնուհետեւ իսկոյն պիտի յայտարարենք :

ՈՒՍ ԴԻԱՆԱԳԵՏԸ

Չերազը Լ'Արմէնի վերջին թիւի մէջ հրատարակել է մի յօդուած, որը իբր թէ ամփոփում է մի նշանաւոր ուսուցիչական հայերի մասին Չերազի հարգած կարծիքները և խորատները :

Պ. Չերազ այդ նշանաւոր դիւանագետի անունը չէ յայտարարում. և մեզ թուում է որ այդ յօդուածը կարծես պատասխան լինի բոլոր այն իրաւացի քննադատութիւններին, որոնք կատարվեցին Չերազի հայ ազգի կողմից Յարին ներկայացված անհամ և մեր ժողովուրդը ստորացնող աղբրագրի առթիւ :

Ռուս դիւանագետը Չերազի բերանով, կամ թէ Չերազ այդ դիւանագետի բերանով, հետեւեալ խրատներն է տալիս հայերիս : Նախ մենք եւրոպայի վրա բոլորովին յոյս չը պէտք է դնենք, երկրորդ Ռուսին պէտք է ազաչենք որ նա Հայաստանը գրաւի, երրորդ՝ երբէք Ռուս Յարի և կառավարութեան մասին քննադատութիւններ չը պէտք է անենք, Ահա այն ժամանակ Ռուս Յարը կը

բարեհաճի մեզ պաշտպանել, ինչպէս իր պաշտպանը, իր հովանաւորութեան տակ առնել. այսինքն իր հպատակները դարձնել :

Դիւանագետը Չերազի հետ ունեցած իւր տեսակցութեան մէջ գոհ է մնացել որ Լ'Արմէնի Ռուսները վրա յարձակում չէ գործել. սակայն դժգոհ է որ նա Ռուսներին չէ պաշտպանել, Պրո Լ'Արմէնիայի և ուրիշ հայ օրգանների յարձակումների դէմ : Ինչպէս երեւում է Չերազի համար կարծիք է Ռուս դիւանագետի հետ և շուտով ուսական վայրեն թիւնները պաշտպանի դերն էլ պիտի ոտանձնէ :

Ռուս դիւանագետը Չերազին լաւ համոզելու համար, կամ թէ Չերազը մեզ համոզելու համար, թէ ուս կառավարութիւնը լաւ արամագրութիւններ ունի դէպի մեզ, յայտարարել է որ հայերի կոտորածները միջոցին եղած անարարութեան պատճառը Լօբանովն էր. որը մի սխալ քաղաքականութեան էր հետեւում և Յարին խարել էր :

Թող այդպէս լինի, բայց ո՞ր թողնենք Յարի սեփական ձեռքով գրված այն քաղաքական նկատողութիւնները, որոնք դժբախտ էին Գալիցիայի և ուրիշ նախարարների հայերին խեղդելու համար մշակված ծրագրերի վրա :

Թողնենք ներկան, և անցեալի մէջ մտնենք. ՌՊ էր խարոզը ներսէս Աշտարակեցուն, Ղարաբաղի մեղիքներին, որոնք Ռուսաստանի հովանաւորութեան տակ ազաւ հայրենիք ունենալու յոյսով ուս զօրքերի հետ միասին կու մղեցին Պարսկաստանի հետ : Այն ժամանակ կարծեմ Լօբանովը դեռ չէր էր ծնվել :

Թողնենք հայերին և անցնենք միւս օտար ցեղերին, որոնք խեղդվում են Ռուսաստանի ճիւղերի ներքի տակ :

Վրացիները սիրով ընդունե-

ցին Ռուսաստանի հովանաւորութիւնը, այսօր լուծվելու վրայ են : Մինչև այդպիսիները մինչեւ օրս կատարեալ ազատութիւն էին վայելում և նոյն «բարի», «մարդասէր» «նիկոլա» Յարի օրով ամենաձանր ճնշումների ենթարկվեցին. ու պէտք է ենթարկվեն մինչև օր իրենց նախկին ազատութեան ստուգելը չը մնայ :

Այս դէպքերում էլ Լօբանովը չը կայ :

Ռուս դիւանագետը մէջ է բերում թուրքի երբեմն սարուկ ժողովուրդների ազատութեան գործի մէջ իրենց կատարած դերը : Բայց ո՞ր փոքր շատ է խելքը գլխին մարդը չը գիտէ թէ այդ աշակցութիւնը ազգի էր ունենում քաղաքական հաշիւներով, և ճիւղաց ազատելով ուսը ուղում էր իր հակառակորդ պետութիւնների կողքին իրեն բարեկամներ ունենալ. միայն բարեկամներ, որովհետեւ լաւ համոզված էր թէ Բուլղարիան, Սերբիան և Յունաստանը այնքան հեռու էին իր երկրից, որ անկարելի էր նրանց կցել մեծ Ռուսաստանին :

Չէ, պարոն Չերազը կամ այդ բոլորը մոռանում է, կամ թէ չի հասկանում :

Ռուս դիւանագետը, եթէ հայերը իւր խրատներին չը լսեն, ոպառնում է որ հայերը պէտք է ջնջվեն, որովհետեւ, բացի իրենցից ոչ մի եւրոպական պետութիւն չէ կարող հայերի վիճակը թեթեւացնել : Եւ այդ մեծ սպառնալիքը միայն նրա համար է, որ հայերը ուղում են ամբողջ եւրոպայի հովանաւորութեամբ ազատվել, նրա համար է որ հայ թերթերը քննադատում են Ռուսական բռնակալութիւնը :

Բաւական անկեղծ դիւանագիտութիւն, բայց և մի տեսակ թուլութեան, ապագայ երևակայական վախի նշան :

Հայերս ուսները հետ կարող ենք այնքան բարեկամ լինել, որքան մի Գերմանիայի. և Ռուսաստանի հետ մեր բարեկամու-

թիւնը միմիայն դիւանագիտութեան վրա պէտք է հիմնված լինի : Ռուսիային անպայման կերպով հաւատալը յանելի վտանգաւոր է, քան թէ թուրքին :

Մակարի պէս ուսամուկ կաթողիկոսը անգամ իր վերջին օրերում զըզեց ուսական հայակուղ դիւանագիտութիւնից և յայտնեց իր զըզանքը :

ՎԱՐԴՕ

ԳԵՐՄԱՆՈՑ ՏՆՏԵՍԱՎԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԱՆԿՈՒՍԸ

Դէպքը կարծեա՞նք անելի մեծ էր, հարուածը շատ անարկու եղաւ : Դեռ ըլլալիքէն զուրս : Թէեւ մեր լրագրիները այնչափ ուշադրութիւն չի դարձուցին այդ դէպքին եւ կամ վերին աստիճանի հարեանցի կերպով անցան անոր վերայէն. մինչդեռ արեւմտեան մամուլը լայն տեղ մը տուաւ այդ մասին վիճարանութիւններու ու խորհրդածութիւններու երկար շարք մը տեղացներով, որոնք տակաւին կը շարունակեն տաք թափով մը :

Ինչպէս Գերմանիոյ ճարտարագործութեան ու վաճառականութեան շարաշար անկումին վրայ է : Տնտեսական հաշիւներէ զատ, միջազգային տեսակէտով ալ մեծ նշանակութիւն ունենալով այդ երեւոյթին վերաբերեալ գոնէ ամփոփ ակնարկութիւն մը նետել շահեկանութենէ շատ ալ զուրկ չը պիտի ըլլայ կարծեմ :

Ինչպէս յայտնի է Գերմանիան, իր միացեալ կայսրութեան կազմուած օրէն սկսեալ, զարմանալի արագութեամբ զինուորական զօրութեան զէնիթը հասաւ. բայց իր յառաջդիմական պատուքը ասով չը յագեցաւ, այստեղ չի վերջացաւ : Ան միեւնոյն ժամանակ ուրիշ շահաւէտ ասպարէզ մ'ալ խոյացաւ յանդիմարտի վաճառականութեան ասպարէզն էր ան, որուն համար միլիարդներ չը խնայեց ոչ մի անգամ և խոշոր փոխառութիւններ ալ ըրաւ երբեմն Բարիք ու Լօնտօն՝ բարձր տոկոսներով :

Իրաւ է թէ, սկիզբէն անոր ձեռագործ ապրանքները ընդարձակ չըլարեութիւններ ունեցան եւ հակայ շահեր արտադրեցին. սակայն զարձալ գերման կառավարութիւնը

չ'յաջողեցաւ կանոնաւորապէս վճարել ըրած փոխառութիւնները, վասն զի թէեւ շահը շատ էր, ծախսելու տեղը ալ անհամեմատ բազմաթիւ էր: Ասոր համար ան ստիպուեցաւ հետզհետեւ ապրանքներուն արժէքը աւելցնել ու անանկ արտածել: Փամանակ մը բաւական անհոգուն շահարթութիւն ունեցաւ, նոյն իսկ Անգլիական ու Ֆրանսական վաճառականութիւնը գերազանցելու աստիճան:

Բայց եկուր, տես որ, քանի մը ատրիններէ անդին, այդ յառաջագէտ սըլացքին յետադարձ ընթացք մը յաջորդեց յեզակարծօրէն: որովհետեւ բոլոր օտար վաճառատեղիները մէկիկ մէկիկ փակուեցան իր գէտ, եւ այս ալ բացարձակապէս գիներուն օրբստօրէական յաւելումին ու սուղնալուն պատճառաւ:

Ճիշդ հոս սկսաւ Գերմանիոյ ճարտարագործութեան եւ վաճառականութեան ձախող կերպարանափոխութիւնը:

Միացեալ Նահանգները, որ անոր ամենալու շահատանները կը կազմէին, չուշացան այժեբնին բանալ: Ուր սասը տարիներէ ի վեր իրենք ձեռնարկեցին եւ կարողացան պատրաստել ամեն տեսակ վաճառքներ, աւելի մաքուր դիմազկոն եւ մանաւանդ գիրազգին քան Եւրոպականը: Այս կէտին մէջ ալ մրցումը սոսկայի եղաւ, մրցանակն ալ Ամերիկային մընաց:

Վաճառականական հայուեցիքը ցուցակները բացորոշապէս կը ցուցնեն թէ, Գերմանիան, որ երբեք նոր աշխարհի բոլոր պէտքերը կը հոգար, հիմա ընդհակառակը հոն շատ բան մը չը ներմուծելէ զատ, իր հրապարակներն ալ ողողում կը տեսնէ Ամերիկեան ապրանքներով, որոնք միլիոններ կը խլին: կը տանին իրմէ:

Վնասը ասով չի վերջանար. տնդին երկրորդ եւ ոչ ալ նուազ սպառող շահատան մ'ալ ձեռքէն կելլէ կամաց կամաց. Ռուսիան է ան:

Բեթերսպուրկի կառավարութիւնը վաղուց ծուռ նայեալքով կը նայէր Գերմանիոյ տնտեսական զարգացման, ուստի այսօր եռանդուն փութիտութեամբ մը ամէն կողմ անհաշի գործատներ հիմնելու ետեւէն է: Ֆրանսայէն փոխ ատած դամարներուն գլխաւոր մասը վաճառականութեան տարածման յատկացուց եւ կը յատկացնէ յաջորդաբար, մօտ ապա-

ղայր մէջ վերջնականապէս գոցելու համար իր գոնիքը գրացիրին զէմ:

Արդէն Ռուսիա, Ֆրանսա եւ Անգլիա միասին որոշած են, թո՛ղ յառաջխաղացումներն արդիւն չառնուին Փոքր Ասիոյ մէջ, ուր Համիտին շնորհիւ թափա հաց մը գտած էր վերջերս:

Այսպէս, անպայման կերպով սահմանափակուելու ու թեթեւալու վրայ է Գերմանիոյ տնտեսական կըջիւղը, իր ներքին քաղաքականութեան մէջ ալ մեծ տանդապ արտադրելով: Այդ երկրին ճարտագործութեան ընդլայնումը, որ ստեղծած էր միանգամայն գործաւորական ստուար դասակարգ մը, հիմա այս դասակարգը անգործ եւ աւելի անօթի մնալու դատապարտուած է՝ հարկաւոր գործարաններու գոցուելով եւ կարգ մը մեծ գործատուներու սնանկութեան հետեւանքով: Ուրեմն ընդհանուր գործադուլը վերահաս է եւ խոզովութիւնըն ալ անխուսափելի, քանի որ ընկերավարական կուսակցութիւնը դիպող առիթը բնաւ չի պիտի փախցնէ գործաւորներու իրաւունքը ազդուապէս պաշտպանելու համար կառավարութեան առջեւ: Անա այսպէս ընկերական հարցն ալ կ'ընտոս կէտի մը պիտի հանդիպի հոն:

Որովհետեւ երկրի մը ներքին քաղաքականութիւնը սերտօրէն կապուած է արտաքինին հետ իբրեւ իրարու լրացուցիչներ, հետեւաբար անկարելի է որ Գերմանիոյ միջազգային կացութիւնն ալ չի խախտուի: Պէտք եւ պահանջ ամեն ինչ կը փոխեն ակամայ:

Վիլհելմ կայսրը ամենէն աւելի խորը զգացած կերեւի այս մասին, վասն զի ինքը որ ժամանակ մը եւրոպայի վեհապետներու մէջ ստաջնակարգ դեր մը խաղալ կը յուսակնէր. նոյնիսկ հպարտութեան հովէն տարուած ձեռքով ոտքով Մարյադոյն արեւելքի ինդիան խառնուեցաւ, իր բռնակալութեան կտակագիրը երբօրը ծոցը դրած հասցուց մինչեւ Չինաստան, պատգամներ գոռաց եւ պահ մը կարծեց ինքզինք միահեծան տէր համայն աշխարհի, մէկէն ի մէկ ըստիպուեցաւ տարաբանօրէն սթափելու իր այդ սակեզոց երազներէն:

Ան, վերջին հայուեցարդարութեան օրը հասկցաւ թէ իւրոտ պատար Ռուսիան կլլեց, Ճարմինան, Անգլիան եւ Ֆրանսան առիւծի բաժին առին. իսկ իրեն լոկ պատրանք,

յուստիարութիւն եւ կամ ճիշդ երկնային կայսրութեան քահնիցս եւ առեքեսս խնդրած ներողութիւնները մնացին ժառանգ:

Վիլհելմ յուսախար, ներսն զրսն նեղուած, անհանգիստ, սկսած է փնտռել նոր նեցուկ մը, ուրիշ ճար մը իր ազդեցութեան անկումը արգիւելու համար: Այլեւս շատ մէջք չի կարգեր Աւստրիոյ եւ Ռուսիոյ, առաջինը ապիկար, խարխաւ, երկրորդը դէպ ուրիշ կողմ հակած կը տեսնէ: Արդէն իրարու հետ այնչափ տաք չեն հիմա, մանաւանդ Գերմանիոյ մօտ ժամանակներս ըրած մաքսային անհեթեթ յաւելումներուն պատճառաւ, բան մը որ, զինակցութեան զաշնագիրը նորոգելու համար ալ աննպաստ հակազդեցութիւն մը պիտի ընէ յառաջիկային:

Մինչդեռ մէկալ դին, Գերմանիոյ համար աւելի վատագուտը ու ցաւալին, երկեակ նիզակակցութեան ամեն ժամանակէ շատ փայլուն ու ամուր դիրքի մէջըլլալն է: Ռուսիոյ հեղինակութիւնը ու գիտակցութիւնը իր լրումին հասած է ամենուրեք: Ֆրանսան ալ իրեն գլուխը կորովամիտ վարչութիւն ունենալով, սքանչելապէս պարզեց ներքին քաղաքականութիւնը եւ վերականգնեց իր նախկին վարկը արտաքինին մէջ:

Ամենէն ծանր հարուածը այս է Վիլհելմին համար: Ասկէ զուրս գալիք պատահականութիւններու առաջքն անհնու տենդէն ընտուած կեղծաւորութեամբ խոնարհեցաւ Չարին բարեկամութիւնը հայցել Տանձիկի զիմացը, մտածելով միանգամայն թէ գուցէ այդ միջոցաւ Ֆրանսայի կիրքն ալ զսպած կըլլայ ժամանակ մը մինչեւ որ նոր յաղորդութիւն մը ձեռք ձգէ:

Տարօրինակ զուգադիպութեամբ մը Վիլհելմ ալ իր մտերիմ խալիֆային պէս անպատճառ քառութեան նոխազ մը կը գտնէ եւ ամեն մեղք տնոր կոնակը կը բեռնէ, երբ անկում մը, ամօթ մը եւ կամ ծրարիւններուն ջուրն ինչալը կը զգայ ու կը տեսնէ: Եւ քանի որ այս բոլորը ձախողութիւնները արտաքին գործոց նախարար կոմս Պիլ լօֆի օրով պատահեցան պէտք է որ ան տուժէ ու քաւէ զանոնք կայսեր բարկութիւնը իջեցնելու համար: Արդէն յատոնց կը զրցուի թէ պիտի հրաժարի պաշտօնէն, բայց աւելի շիտակ ըսած կըլլանք երբ պնդենք որ անպատճառ քայտի հրաժարեցուի նոյն իսկ քիչ

օրէն: Անշուշտ նոր նախարարին հետ նոր դէպքեր ու նոր փոփոխութիւններ ալ պիտի գան մէջտեղ, տեսնենք, կարելի է դարձեալ առիթ պիտի ունենանք այդ մասին խօսելու իր ատենին:

Ս. ԳՈՒԱՅՐ

Ֆօքլան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—(00)—

«Իրաւունք»-ի 71 թիւով, Ֆիլիպպէն զրկուած թղթակցութեան մը մէջ իրողութիւն մը հրէշային խեղաթիւրումներու վերածուած էր:

Խոստովանելով հանդերձ որ, խնդրոյ առարկայ եղող երիտասարդներուն անձը, բարոյականը մեր պաշտպանութեան դէտքն անգամ չունի, իբրեւ ականատես վիճակներ սակայն ան գիշերուան անցքին, մեր խղճին համար պարտք կը ծանրանայ ըստ իրողութիւնը յայտնելու հոս: Իսկ քիչ թէ շատ դատաւարութիւն ունեցող ընթերցողին կը ձգենք կուսնել նաեւ հետեւեալ պարագան թէ՛ լոկ անձնական խնդիր մը անհեթեթութիւններու վերածելով, իսկ յատուկ փոշոցային լեզուով մը հրատարակող ուղորմելիներ վիրենք արհամարողներէն վրէժ լուծած ըլլալու (!) դիւական մարմաշնուն հետ, դեռ սերիչ է՞նչ դերեր լրացնելու սահմանած են այդ ստ գրութիւնը...

Ահա իրողութիւնը իր իսկութեան մէջ:

Հոկտ. 7 ի կիրակի իրիկունը, յիշուած երիտասարդները, մէկ երկու ընկերներով գիշերային սովորական պտոյտ մը կընէին գէպի կայարանը տանող պողոտային վրայ, սրտնցմէ քանի մը քայլ վերը դիմացի կողմէն նստ մենք: Քիչ մը վարէն լըսուեցան պուկար կուսակցականներու պոռչտութիւնը: Երիտասարդները երբ բաւական յառա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՃԱՍԿԱՆԱԼԻՆ

IX

Գիշերը հասանք Աղսթաֆա. շատ ուշ էր, մենք աւելորդ, համարեցինք այնտեղի մեր բարեկամին անհանգստացնել, ուղղակի դիմեցինք փոստի կայարանը: Կայարանի կապալաւուն մի հուժկու ուժեղ եւ կրթութիւն ստացած երիտասարդ, մեր հարեանակիցն էր եւ մօտիկ ընկեր. սակայն նա այդ րոպէին զբաղված էր մի ուսուսողով, որը անպատճառ ձի էր ուղղում նրանից իր ճանապարհը շարունակելու համար:

— Զի չըկայ, հաւատացնում եմ ձեզ, պարոն, ասում էր նա:

— Անպատճառ պէտք է տաս հաշուկ. հրամայում եմ որ տաս, թէ չէ ձեռքիցս չես ազատվիլ. ես գիտեմ քեզ պէս հայուկներին դաս սուղ, պատասխանում էր սպան:

— Շատ լաւ, եթէ չէք հաւատում, գնանք գոմիքը, տեսէք, ձի կայ թէ ո՞չ. բայց ինչ էլ գնացել են, այսօր ճամբորդներ շատ կային:

— Սպան խրոխտաբար առաջ ընկաւ, Մ. նրան հետեւեց փոքրիկ յօպտերը ձեռքին բռնած. Վահէն էլ հետեւեց նրանց: Գոմը մտնելուն պէս Մ. սպայի օձիքից բռնելով, կատաղաբար շնջում է:

— Գէջ հիմա սաս, ո՞ւմ էիր անարգում, ո՞ւմ էիր հայունի անուանում. ո՞ւմ էիր ուղղում դաս սուղ. հիմա ես քեզ մի լաւ դաս կը ասմ

այնպիսի մի դաս, որ էլ երբէք չը մոռանաս:

Ու այդ խօսքերի հետ սպայի երեսին մի երկու փառաւոր սպտակներ են իջնում:

Սպան ուղղում է աղապակել, բայց Մ. նրան կրկին շնջալով սպառնում է.

— Խեղճ գլուխդ հաւաքով, ձայնդ ոչ ոք չի լսի, ես քեզ մարդավարի կերպով հասկացրի թէ ձի չըկայ: Հիմա քանի ոսկրներդ ուղջ են, սուս ու փուս դուրս եկ, գնա՛ հանգիստ քենացիր. առաւոտեան ես ինքս քեզ կը զարթեցնեմ, երբ ձի լինի:

Մի քանի րոպէից սպան, Մ. եւ Վահէն սուս ու փուս դուրս ելան գոմից:

Սպայի հեռանալուց յետոյ՝ Վահէն մօտեցաւ Մ. ին եւ նրա խոշոր ջրատ ձեռքը բռնելով ստեց.

— Թո՛ղ տուէք ձեր ձեռքը սեղմելու, իսկապէս լաւ դաս տուիք այդ կաթ

նաչրթունք զինուորականին:

Ձեր գէմքը արդէն արտայայտում էր որ այդպէս պէտք է վարուէք նրա հետ, երբ գոմը տարաք: Անպիտանք ձի է ուղղում եւ փոխ սնակ ձեզ հետ վիճելու, արհամարանք է ուղղում ամբողջ ժողովրդի հասցէին:

— Ենթահարալ եմ, այդ մ.զ. համար սովորական է. մի քանիսին այդպիսի դասեր տուել եմ արդէն:

Այդ տեսակները Ռուսաստանից նոր եկողները են լինում մեծ մասամբ, որոնք հայի վրա շատ սուտ կարծիք ունին նրան ընդունում են հոտ ստրուկի տեղ. շատ քիչ է պատահում որ կովկասում մի քանի տարի մնացած ուսուր այդպիսի պարագաներում յանգգին հայի հետ այդպէս վարվի:

Է՛հ, լա՛ւ, գնանք ներս, եւ խօսքը ուղղելով ինձ՝ տեսց. Մուրէն, դու ինձ չը ծանոթացրիր այս պարտի հետ, տեսնեք ժամանակ էլ չեղաւ. Տիկինը ո՞վ է:

չացած, թագին պահանջող օտար-կանը վարի ձայները վերագրելով սոյն երիտասարդներուն, կոշտ ձեռով բացատրութիւն պահանջեց: Երիտասարդները յայտնեցին որ, իրենք—ինչպէս կը տեսնէ—մեզմ ձայնով կերպին, իսկ եթէ հաճի քիչ մը վար երթալ: Բողոքին մէջ պիտի տեսնէ պառակտողները: Ոստիկանը փոխանակ իրողութիւնը հասկնալ ջանալու, անպատշաճ և անտեղի խօսքեր ըրաւ: Երիտասարդները պնդեցին, իրենց ցաւը յայտնեցին և բացատրութիւն պահանջեցին: Ոստիկանը առանց ուշադրութիւն դարձնելու ըսածնուն. ուզեց պահակաւնոց տանիլ: Երիտասարդները պնդեցին իրենց յանցանք չունենալուն վրայ, բայց տեսնելով որ ուրիշ ոստիկաններ ալ եկան, իրենց բացատրութիւնը սակայն պահանջեցին: Երիտասարդները տալու համար, իսկ թէ ճանապարհին ի՞նչ տեսակ վարուած են երիտասարդներուն հետ, և թէ ի՞նչ թիրիմացութիւններու հետեանքով ստիպուեցան բռնութիւն պարագայ տեղը մնալ հոն, ատմանրամանութիւններուն մէջ մտնել աւելորդ է: (*)

Ահա ամէնը ի՞նչ կուզուէր որ ընէին երիտասարդները «հայ անունը, ո՞հայ գաղթական դժբաղտութիւնը» իբրեւ «նախատինք» անոնց երեսը աւողին «թէմէննա» ընելով հեռանալի՞ն, թէ իրաւունք ունէին պատշաճօրէն բացատրութիւն պահանջել: — Եթէ առաջինը, արդէն: հոտ է զանազան գոյնի և կարգի «հայ»

(*) Ֆիլիպպեցի երիտասարդներէն կը խնդրենք որ երբեք կարեւորութիւն չը տան հայրերին հետ նման արարածներու եւ միւս անգամ մեզ չի ձանձրացնեն այդ անունով:

յորդիաներու և այն երիտասարդներուն իրական տարբերութիւնը:

Ընդունեցէք ևս
Դրիգոր Պատկեան
Ա. Շամեան
Յակոբ Պատկեան
Հոկ. 24 Ֆիլիպպէ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Վիլհելմի սրբազան ուխտագնացութեան տպաւորութիւնը գեռ թարմ է, զոնէ մեզ համար: Պարտականութեան գիտակից մամլոյ արդար զայրոյթը չպզգեց Կրօնասէր վեհապետին վատ որդին վրայ:

Նա Սուլթանին միեւնոյն հաւատարիմ բարեկամն է ինչպէս ասկէ առաջ: Վերջերս իր զուակը Պոլիս այցելեց, կերեւայ թէ իր պակիին մէջ ալ միեւնոյն վատ բընազդները դարձնել կուզէ: Այցելութեան առթիւ կայսեր, կնոջ և Սուլթանին միջև սրապիտ հեռագիրներ փոխանակուեցան: Մեր ցատումը անզգայութեան կը հասնի «քրիստոնէոյ» վեհապետի մը այս արիւնտ ու եղբունական հեղուկութեան առջև: Ընդհանրապէս տիրող կարծիքը սա է թէ՛ Վիլհելմ քաղաքականօրէն ուրիշ ընթացք չը կրնար բռնել: Հարկ չըկայ զայս ընդդիմախօսելու: Նկատել պէտք է սակայն որ Վիլհելմն ալ արիւնառու զործերէ երբէք չը խորշիր:

Յիշենք ի՞նչ բարի գործերէն մի քանին:

Թրանսվալի պատերազմէն ի վեր Գերման հասարակութիւնը առիթ չը փոխուց գովելու ցանկութիւն մը շեշտելու, որ կառավարութիւնը միջամտէ: Վիլհելմն ո՛չ միայն ակնմիջ չը կախեց ժողովուրդին ցանկութեան այլ նաև այնքան յառաջացաւ իր էտէպսիզութեան մէջ, որ Անգղիա

այցելած միջոցին Վորտ Բօպերթսի սեւ կուրծքէն մեծ շքանշանով զարգարից: Աս չը բաւեր: Երբ նախագահ Քրիստիան յալթանակօրէն և մեծ պատուով Թրանսայէն Գերմանիա անցաւ, կայսրը մերժեց ընդունիլ զինքը: Այս դէպքերը առիթ տուին հասարակութեան տրտունջին. ինք ալ խստովանեցաւ իր հեղինակութեան ժողովուրդին առջև ակարացած ըլլալը, բայց խղճմտանքի բարեբար ոգին կը պակսի անոր:

Չինական պատերազմի միջոցին շտեմ կայսրը, աշխարհակալութեան կողմուտի խափոսիկ երազանքներուն մէջ յիփացած, հրամայեց զինուորներուն անխնայ կոտորել, առանց գերի բռնելու, և ժամանակ մը մոռցաւ թէ ինք ալ մարդ է: Ըստ այնմ Սուլթանի և Վիլհելմի բարեկամութիւնը քաղաքական չէ, այլ հոգեբանական, որովհետեւ երկուքին ալ անմեղ արիւն հոսցնել տալու ձիքերը յատուկ ըլլալ կերեւան:

Ան վաճառող շրթունքները, որոնք Վիլհելմին ոճոագործ հրամանները արձակեցին, չը վարանեցան Գերման զինուորները Աստուծոյ առջև բարեխօսել: Մարդ ծիծաղելէն չը կշտանար անոր այս աստիճան սօփուութեան վրայ:

Յատկանշական և միանգամայն բնորոշ է քարոզիչներու բռնած ընթացքը գէպի իրենց վեհապետին: Մին թերթի մը մէջ բացարձակապէս կը պաշտպանէ անոր զինուորներուն տուած հրամանը, առարկելով թէ՛ այն պարագային, երբ 50,000 չինացիներ գերի բռնուին, ի՞նչ պէտք է ընել, հապա՞—պէտք է կոտորել ըսի կուզէ Քրիստոսի գառնազգեստ դայլ—աշակերտը: Բարեբաղդաբար ոչ միայն 50,000 գերի չը կրցան բռնել, այլ նաև Գերման զինուորներու արիւնտ

գլուխներ ստացան: Իսկ ուրիշ քարոզիչ մը չը խպնիր 7000 հոգիներէ բաղկացող ժողովի մը առջև յայտարարել թէ հասարակութիւնը իրաւունք չունի (սիք.) տրտնջալու կայսրի ընթացքին դէմ, սրովհետեւ ինչ որ ան կընէ, Սուրբ հոգիէն է (!!) մղուած: Իստիօրներու դգժած ուղեղէն պակաս յիմարութիւններ սպասել խելամուտիւն չ՞էր լիներ մեր կողմանէ:

Ժամանակէ մը ի վեր մեծ փոփոխութիւն կ'ընդարուի Գերման—Հայ բարեգործական ընկերութեան մէջ, որը Լէբսիուսի ձեռնբերեցութեամբ հիմնուած է, Տր. Լէբսիուս մեզ քաջ ծանօթ Գերման գէմքերէն մին է: Չարդերու ատեն անձամբ Հայաստան գնաց գէպերը ուսումնասիրելու: Հայրենիք վերագարձին «Հայաստան և Եւրոպա» գիրք մը հրատարակեց. այս երկասիրութիւնը, որուն մէջ այնքան լաւ պատկերացուած է հայկ. խնդիրը իր բոլոր պարագաներով, այնպէս որ յեղափոխութիւնը իր ջարդերու պատճառ որակող խրատիւրակները պէտք է շառագունէին իրենց շարմիտ դատողութեան վրայ, հայկ. խնդիրը կազմող օտար մատենագրութեան մէջ լաւագոյն տեղերէն մին կը գրաւէ: Իբրեւ հեղինակ «Հայաստան եւ Եւրոպա» գրքին մեր յարգանքը չենք կրնար զլանալ Տր. Լէբսիուսին: 96էն սկսեալ անոր տնօրէնութեամբ կը հրատարակուի «Տէր Քրիստիք Օրհնան» ամսաթերթը, որուն սկզբունքը, ինչպէս կարելի է մակարէրել թերթին անունէն, կրօնական է, բայց առաջին տարիներուն մէջ իր շահեկան բովանդակութեամբ քաղաքական ըլլալու ունէր: Հիմա փոխուած է ամէն ինչ. տնօրէնի գաղափար

Տիկնոջ փոքրիկ սկսեց լալ, խնդրեցինք գլուխն էր:

Մ. իսկոյն վաղեց երկու գեղեցիկ տանձեր բերեց և հանելով իր անբաժան սրինգը սկսեց նուազել:

— Ընդ արէք սարեր ջան, հովարէք, իմ դայիին դարման արէք» երգը: Փոքրիկ տանձը բերնի մէջ գրած, աչքերը ուղղեց Մ. ի վրայ:

Մի քիչ նուազեցուց յետոյ, Մ. դարձաւ մեզ:

— Այսպէս է անցնում կեանքս, եկել եմ այտուղ վեր ընկել: Գիշերները առ հասարակ հանգիստ եմ լինում, բայց երբ այսպիսի թարս զինուորականներ են հանդիպում, ծառան ինձ իսկոյն վարկեցնում է, իմ պատւէրի համաձայն և ինքը անհետանում: Առ ես գործը կարգադրում եմ, Ուսուցիչ եղայ, զինուոր եղայ, հիմա էլ կապալարում եմ, այսինքն կապալարում եկրոր սրգի և ապրում եմ կայարա-

նում, գլխաւոր ճանապարհի գլխին. բոլոր բարեկամներս, սիրելիներս, ընկերներս, ատենիներս, մեծ փոքր մարդկանց հանդիպում եմ այտուղ: Ամէն օր նորութիւն, ամէն օր նոր մտք, նոր տիպ, նոր զիպուած: Մրինգս էլ կայ. էլ ի՞նչ եմ ուզում: Երբ զգում եմ որ սկսում եմ բոլորովին վայրենի գառնալ, Տիկնոջ մօտիկ է: Գնում եմ սյնտեղ. մի երկու շարաթ մուտմ, քաղաքակրթութեամբ ժարդի կերպարանք ստանում և կրկին վերագառնում:

Այս վերջանցեալ յետոյ Մ. կրկին սրինգը վերցրեց և սկսեց.

«Ամպելաթոն չի գալիս, մթնելա տուն չի գալիս»:

Եւ մինչև վերջանցելու ծառան սամալարը, երկու հու, հաց, պանիր ամաններ բերեց ու շարեց սեղանի վրայ: Մ. դադարեց նուազեցուց:

— Դէհ, մտնեցէք, տիկին խնդրեմ մտնեցէք. հիմա էլ փորներս կշտաց-

նենք, սրինգով փոր չի կշտանայ:

Ընթրիքը շատ ուրախ անցաւ. փոքրիկները անգամ զուարթացան:

Տիկնոջ սրբխաների հետ քաղց իր սենեակը, մենք երբեք մի ժամի չափ էլ խօսելուց յետոյ, երբ աքաղաղները արդէն երորդ անգամ էին կանչում, գնացինք հանգստանալու:

Երբ մեզ համար պատրաստված սենեակը մտանք՝ վաճէն ասեց.

— Տօ էն ի՞նչ լաւ տղայ է գարձել. ծառայ. տէր. կրթված. կոպիտ. բանաստեղծական գեղուն զգացումներով լի. քաջ, պտղաբուն: Տեսնելիք թէ ինչպէս օճի նման շնչում էր սպայի ականջին և ինչպէս դանդաղօրէն, ուժը հալիւի առնելով ապտակներ էր հասցնում խեղճ սոխին:

Մեր ժամանակը ուսում առածների մէջ այս տեսակ տիպեր չը կային. նրանք քաջութեան տեսակէտով միայն ծաղրի առարկայ էին:

Եթէ շատ են այս տեսակները, ուրեմն մեր վիճակը այնքան էլ յուսահատական չէ:

(Շատուհանի լի)

— Պարոնը վաճէն է. յիշում ե՞ս մեր քաղաքի հուշակար վաճէն. փոքր ժամանակ մեր դպրոցում էր: Մ. մի երկու վայրկեան շուտարձ մընաց և յետոյ յանկարծ վրա ընկաւ և վաճէին իր գրիկ մէջ առաւ:

— Իսկ տիկինը մի Հայաստանցի կին է, գաղթականուհի, որ իր փոքրիկներով Ղարս է գնում:

— Շատ լաւ, դնանք ներս. անպատճառ ընթրած չէք լինի. կընթրենք կը խօսինք: Տիկին, ն ես իմ սենեակը կը տամ, թո՛ղ հոնդստանայ միջին առաւստ:

Վաղը ես ձեզ ճանապարհ կը դնեմ լաւ, հանգիստ կառքով. վաճէին արժէ. խեղճը օտարով շատ ման եկած կը լինի...:

Մենք ամենքս էլ հաւաքվեցինք բիւֆէն, ծառան իսկոյն առաւ ապրի մէջ սեղեց կարկած մեծ լապտերը վրանց, ու շտապեց սամալարը և կերակուր պատրաստել:

բը (°), թերթին ծառայել և բովանդակութիւնը նկարագրած են կրօնական գոյնով, Բարեգործ. ընկերութիւնը տեղի տուաւ միսիօնարութեան, մարդասիրական ձեռնարկութիւնը միսիօնարական ձեռնարկին, Հայկ. խնդրոյ վերաբերեալ գրեթէ ոչ մի լուր, ոչ մի տեղեկութիւն լոյս չեն տեսնար ընկերութեան օրգանին մէջ, Անոր էջերը դրաչափ են Ղուրանի լուսաբանութեամբ, Եւ կարծես ճիգեր ալ ըրին նոր կոտորածներու լուրերը հերքելու հերկու ժողովուրդներուն մէջ ահրող խաղաղութիւնը չը վրդովելու համար:

Մենք չենք կրնար հաշտ աչքով նայիլ կրօնական ցած մըրցումներով սկսուած գործի մը, սակայն պէտք է հանդուրժենք երբ մեր կրէստաները այնքան անտարբեր կը մնան գէպի իրենց հայրենակիցներու թշուառ վիճակը, Խնամել որբերը, օգնել թշուառին անոնց պարտքն է. բայց այդ դուռը վաղուց գոցած են անոնք:

Դաւանացի
Թ. . . (Կերմանիա)

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Բեթերսպուրկի հայոց եկեղեցին իր հաշուով գերեզմանատան եկեղեցիին կից ձերբոր համար շքեղ պատասպարան մը շինեց է:

— Բաքուցի երկու դամատները՝ Մէլիքեան և Արամեան իրենց հաշուով էջմիածնի մէջ նոր վեհարան պէտք է շինեն:

— Յարութիւն Կիւլպէնկեան իր ամուսնութեան առթիւ 100 ոսկի նուիրեր է Պոլսոյ ազգային հիւանդանոցին:

— Դաշնակցութեան և վերակազմեալ Հնչակեաններու միացման համար աշխատող Չէզոքը սկսեր է հրատարակել իր ինչ ձեռով բանակցութեան սկսած լիւնելու մանրամասնութիւնները: Հրատարակութիւնը կը կատարուի ամերիկեան հայ թերթերու մէջ, մեզմէ խնդրուած էր արտատպել, սակայն այնքան երկար են, որ ան արելի է ամբողջովին հրատարակել. ուստի կոպտանք վերջանալուն և այնուհետեւ ամփոփ տեղեկութիւն կուտանք մեր ընթերցողներուն:

— Պատրիարքարանը նպաստից սնտուկէն մօտ հարիւր գաւառական վարժարաններու կօզնէ. բայց զիմուսները հետզհետէ կը շատնան ուստի Պատրիարքարանը ուշած է կարգադրութիւն մը ընել որոշելու համար թէ աւելի որ տեսակ դպրոցներու պէտք է օգնել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Փրանսական նաւաբաժինը արդէն Միսիլին կղզիի քովերը կը գտնուի. Փրանսական ծովային նախարարը հեռագիր ընդունեց է ծովակալ Բայարէն, որ ծովու այն կողմուած վիճակի մէջ գըտնուելուն համար դեռ կղզին չեն իջած:

— Սուլթանը Փրանսական գործակատարին հաղորդեց է որ Լօրանտոյի և Թիւրքիի պահանջներուն վճարումները ամսէն ամիս պիտի կատարուի, և իբր երաշխաւորութիւն կը նշանակուին մաքսատանց արգիւնները:

Սակայն պ. Պարսթ պատասխանած է որ Փրանսայի միւս ամէն պահանջներն ալ պիտի կատարուին:

— Սուլթանը ճիգեր կը թափէ Անգլիոյ աշակցութիւնը ձեռք բերել, ինչպէս իրեն խօստացուած է Կիպրոսի դաշնագրութեամբ, Սակայն Անգլիա այժմ անկարող է ու է եւրոպական պետութեան մը գէմ ելլալ:

— Փրանսական գործակատարին նոր պահանջներուն վրայ՝ Երլազը կրկին դիմած է ուսու դեսպանին անոր միջամտութիւնը խնդրելով. սակայն դեսպանը պատասխանած է որ պէտք է Փրանսայի լիովին բաւարարութիւն տրուի:

— Անգլիական դեսպանատան և Բ. Դրան միջեւ համաձայնութիւն մը կայացեր է պատերազմական խառն յանձնարարութեամբ մը կազմելու Եմէնի մէջ սահմանները որոշելու համար:

— Իտալական նաւատորմի մը նոյնպէս թրքական ջուրերը գացեր է:

— Փրանսական կառավարութիւնը Իզմիրը գրաւելու մտքէն հրաժարեր է:

— Եւրոպական մամուլի մեծագոյն մասը կը քաջալերէ Փրանսայի թուրքիոյ դէմ ձեռք առած կտրուկ միջոցը:

— Թարապուղի մէջ քանի մը արաբ ցեղեր ապստամբեր են թուրք կառավարութեան դէմ և երկու գիւղեր հրդեհեցեր են. նահանգապետը 30 ի չափ շէյխեր ձերբակալեր է:

— Հեռագրական գործակալութիւնները թուրք կառավարութեան թելագրութեամբ հաղորդած են թէ Լօրանտոյի պահանջը վճարելու իրատեսովը Փրանս թրքական վէճը փակուած կը համարուի:

— Սամոս կղզիին մէջ կացութիւնը ծանր է. Որովհետեւ ազգային ժողովի անդամներու մեծամասնութեան և կառավարու-

թեան միջև անհամաձայնութիւններ կան:

Ազգային ժողովը Պոլիս դիմած է այդ մասնակցներ սպառնացող կացութեան վերջ մը գնելու համար:

— Սելանիքէն կը հաղորդեն որ Սթոնը փախցնող աւազակները թուրք ստիկանապետի մայրն ալ փախուցեր են և Միսս Սթոնի քովն են տարեր:

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Ա

Անգլիացիները նորէն Պօէրներէն զգալի պարտութիւն մը կրեր են. Բաւական սպաներ կան վիրաւորուած և սպաննուած:

Ֆ Ր Ա Ն Ս Ս

Թուրուէն կը հաղորդեն որ երեք շոգենաւ պատրաստ են թուրքիա շօրք տեղափոխելու համար, եթէ ատոր պէտքը պահուի:

Չ Ր Ն Ա Ս Տ Ա Ն

Լի հունկ Չանկ մեռեր է:

— Չինաստանի մէջ շինուող երկաթուղիի գծերուն մի մասը որդէն վերջացած են:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Երեսփոխանական ժողովին նախագահ պ. Կէչօֆի գրաւոր հրաժարական տուեր է:

Կէչօֆի ազգային կուսակցութեան պետն է, հանգուցեալ Սթոյիլովին յաջորդը: Կըսուի թէ հրաժարումին պատճառը ներկայ կառավարութեան քաղաքականութեանը հակառակ ըլլալն է:

Կէչօֆի յաջորդը ընտրուեր է Պալապանօֆ:

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Նոր ուղղութեամբ միջնակարգ դպրոցները արդէն սկսած են բացուիլ:

Պաքուցի հարուստ պարսիկ թաղիէֆ մահմետական պղկանց շքեղ դպրոց մը բացեր է իր դրամով:

Արդէն 65 թուրք օրիորդներ մտած են այդ դպրոցը:

Դպրոցի շինութիւնը արժէ մօտ 300 հազար ֆրանք և արդէն ապահովուած է:

Այդ եւրոպական ձեռով աղջկանց դպրոցը մահմետական աշխարհի մէջ առաջինն է:

Թաղիէֆ ինքը պարզ պարսիկ մըն է, գործաւորութենէն առաջ եկած հարուստ մը:

ԽՄԱԱԳՐՈՒԹԻՒՆ. ՊՇԱՐԺՈՒՄ՝Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոմս, նամակազուլի, հարանեկան հրաւիրագիր, մահազգ:

Գիները յոյժ զւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՅԻ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով
Իւնիօն Տէ Զ'էդիեսիան Արմ.
Լ'էօրոք Եիւ Տը. Լ'էֆօլ Տը Եիւի 2

Սուխ Ժընէվ
Կարգողի Եանձնաժողով

Ա. Չ. Գ.

Սիլիսդէի ազգային արական վարժարանի համար կուզուի վերկայեալ ուսուցիչ մը որ կարող ըլլայ աւանդելու՝ հայերէնէ ու ֆրանսերէնէ զատ՝ նաեւ երկրորդական գիտելիքներ. փափաքողք բանակցութեան համար թող բարեհաճին դիմել տեղւոյն ազգային վարժարանին հոգաբարձութեան:

Ա. Չ. Գ.

Կը ծախուի 1896ին փետր. 2ին իշխան Պօրիի մկրտութեան առթիւ տպուած գործածուած նամակադրօշներ 1—5—15—25 սանդիմ:

Դիմել՝ ՄԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
Վառնա

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

Յ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ
Նոր Ընթերցարան (պատկերազարդ)
Առաջին տարի
(Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)
Դին 70 Սնթ.

Կը ծախուի Վառնայ Մ. Գալրակ-ձեանի քով:

ОТГОВОРНИКЪ:

Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность — Варна